ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1001-Ա

«26» նոյեմբերի 2024 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 03-Ի N 298-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված <<Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի>> 28-րդ կետի, 29-րդ կետի 3-րդ ենթակետի, 50-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթներով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2024 թվականի ապրիլի 03-ի N 298-Ա որոշման մեջ «հողամասի մակերեսը 0,00378 հա» և «ինքնակամ կառուցված 37.79 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը» նշվել է սխալ.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասում քաղաքացի՝ Գոհարիկ Երեմի Ղազարյանի կողմից ինքնակամ կառուցված բնակելի նշանակության ավտոտնակը օրինական ճանաչելու եվ այն հայաստանի հանրապետության շիրակի մարզի անի համայնքի սեփականությունը համարելու մասին» 2024 թվականի ապրիլի 03-ի N 298-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

ա) Որոշման առաջին կետում նշված «հողամասի մակերեսը 0,00378 հա» փոխարինել «հողամասի մակերեսը 0,00322 հա»:

բ) Որոշման առաջին կետում նշված «ինքնակամ կառուցված 37.79 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը» փոխարինել «ինքնակամ կառուցված 53,09 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը»:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«26» նոյեմբերի 2024 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 1002-Ա
26 նոյեմբերի 2024 թվականի

ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՆԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով ***որոշում եմ***

1. 2024 թվականի դեկտեմբերի 5-27-ը համայնքի տոնական ձևավորման և ամանորյա միջոցառման կազմակերպման և անցկացման համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Կարապետյան - «Անի կոմունալ տնտեսություն» համայնքային բյուջետային հիմնարկի տնօրեն

Հանձնաժողովի անդամներ՝

Գոհար Ծերունյան - Անի համայնքապետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Հայկ Անտոնյան - Անի համայնքապետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար,

Լիլիթ Հարությունյան-Անի համայնքապետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի 2-րդ կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար,

Նաթելա Գրիգորյան - Անի համայնքապետարանի աշխատակազմի

Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի 2-րդ կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Արսեն Առաքելյան- «Անի կոմունալ տնտեսություն» համայնքային բյուջետային հիմնարկի սանմաքրման պատասխանատու

Ռաֆիկ Ավդալյան-«Անի կոմունալ տնտեսություն» համայնքային բյուջետային հիմնարկի տեխնիկական միջոցների սպասարկման պատասխանատու

Եղիա Ալեքսանյան-«Անի կոմունալ տնտեսություն» համայնքային բյուջետային հիմնարկի ավտոաշտարակի վարորդ

2. Համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական և եկամուտների հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյանին.

Միջոցառման կազմակերպման և նվերների ձեռքբերման համար հատկացնել 3144000 (երեք միլիոն հարյուր քառասունչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 2024 թվականի բյուջեի վարչական մասի գործառական դասակարգման 08.02.04.51 4269 (հատուկ նպատակային նյութեր) հոդվածից, 480000 (չորս հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածից:

3. Մշակել և իմ հաստատմանը ներկայացնել միջոցառման ծրագիրը և ծախսերի նախահաշիվը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«26» նոյեմբեր 2024 թվական

քաղաք Մարալիկ

Հաստատում եմ՝
Անի համայնքի ղեկավար՝
Ա. Սարիբեկյան
«26» նոյեմբերի 2024 թվական

ՆԱԽԱՀԱՇԻՎ

ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՆԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

N	Ծախսերի անվանումը	Քանակը	Միավոր արժեքը (դրամ)	Ընդամենը (դրամ)
1.	Նվեր տոպրակներ	2200	650	1430000
2.	Հրավառություն			480000
3.	Տոնածառի լույսեր(ամանորյա լեդ լուսերի շղթա՝ թարթող գնդիկներով)	20	5200	104000
4.	Տոնածառի լույսեր(ամանորյա լեդ լուսեր՝ վարագույրի տեսքով)	30	4500	135000
5.	Տոնածառի լույսեր(ամանորյա լեդ լուսեր՝ վարագույրի տեսքով)	30	5500	165000
6.	Տոնածառի լույսեր(ամանորյա լեդ լուսեր՝ վարագույրի տեսքով)	30	10000	300000
7.	Տոնածառի լույսեր(ամանորյա լեդ լուսեր)	30	6000	180000
8.	Տոնածառի լույսեր(ամանորյա լեդ լուսեր)	20	6500	130000
9.	Զարդարանքի պարագաներ(փաթիլ, աստղ զանգակ)	200	3500	700000
	Ընդամենը			**3624000**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հաստատում եմ՝
Անի համայնքի ղեկավար՝
Ա. Սարիբեկյան
«26» նոյեմբերի 2024 թվական

ԾՐԱԳԻՐ

ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՆԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

	Միջոցառման բովանդակությունը	Անցկացման վայրը	Կատարման ժամկետը	Կատարման պատասխանատու
1.	Անի համայնքի բնակավայրերի և Մարալիկ քաղաքի տոնական ձևավորում	Անի համայնք	դեկտեմբերի 5-25	Ա.Կարապետյան Ա.Առաքելյան Ռ.Ավդալյան
2.	Տոնական միջոցառում՝ Անի համայնքի Արվեստի դպրոցի և Մարալիկի մշակութային երիտասարդական կենտրոնի մասնակցությամբ	Անի համայնք Մարալիկի կենտրոնական հրապարակ	դեկտեմբերի 27 ժամը՝ 18:00	Գ.Ծերունյան Հ. Անտոնյան Լ. Հարությունյան Ն. Գրիգորյան Վ.Սահակյան Ս. Գինոսյան Մ.Բրուտյան
3.	Հրավառություն	Անի համայնք Մարալիկի կենտրոնական հրապարակ	դեկտեմբերի 27 ժամը 20:00	Հ.Անտոնյան Ա.Առաքելյան

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1003-Ա

«26» նոյեմբերի 2024 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆԱՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 582-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող սույն որոշման հավելվածի 1-16-րդ կետերում նշված տրանսպորտային միջոցների ու մեխանիզմների շահագործումն ու տեխնիկական սպասարկումը վերապահել Հայաստանի Հանարպետության Շիրակի մարզի Անի համայնքի <<Անի կոմունալ տնտեսություն>> համայնաքային բյուջետային հիմնարկին:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող սույն որոշման հավելվածի 17, 18 և 19-րդ կետերում նշված տրանսպորտային միջոցների շահագործումը վերապահել <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկին, իսկ ապահովագրության ապահովումը և տեխնիկական

սպասարկումը՝ Հայաստանի Հանարպետության Շիրակի մարզի Անի համայնքի <<Անի կոմունալ տնտեսություն>> համայնաքային բյուջետային հիմնարկին:

3. Անի համայնքի <<Անի կոմունալ տնտեսություն>> համայնաքային բյուջետային հիմնարկի տնօրեն՝ Արթուր Կարապետյանին.

1) Անհրաժեշտ պայմաններ ապահովել սույն որոշման հավելվածում նշված տրանսպորտային միջոցների ու մեխանիզմների պահպանության, անխափան շահագործման և տեխնիկական սպասարկման համար:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 19-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների և մեխանիզմների շահագործումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի <<Անի կոմունալ տնտեսություն>> համայնքային բյուջետային հիմնարկի սպասարկմանը հանձնելու մասին>> N 582-Ա որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«26» նոյեմբերի 2024 թվական
Քաղաք Մարալիկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի
ղեկավարի 2024 թվականի նոյեմբերի 26-ի N 1003-Ա որոշման

ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի «Անի կոմունալ տնտեսություն» համայնքային բյուջետային հիմնարկի սպասարկմանը հանձնվող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների ու մեխանիզմների

Հ/Հ	Տեխնիկայի համառոտ բնութագիրը	Մակնիշը	Պետական համարանիշը	Տեխնիկական բնութագիրը
1	Գրեդեր	ГС-10.07	2545LL	սարքին
2	Տրակտոր	XSB-804	2546LL	սարքին
3	Էքսկավատոր բեռնիչ	JCB 3CX	4786LL	սարքին
4	Էքսկավատոր բեռնիչ	GEHL GBL 818S	2206LL	սարքին
5	Հատուկ աղբատար	GAZ KO-440N	947 LL70	սարքին
6	Հատուկ աղբատար	GAZ KO-440N	946 LL70	սարքին
7	Բեռնատար Ինքնաթափ	MAZ 551626-580-050	934 LL70	սարքին
8	Բեռնատար ինքնաթափ	MAZ 555 102	833 LL70	սարքին
9	Հատուկ ասինիզացիոն	GAZ KO-522N	945 LL70	սարքին
10	Թեթև մարդատար	VAZ 21214	761 CR 61	սարքին
11	Հատուկ աղբատար	GAZ KO-413	858 LL70	սարքին
12	Միկրոավտոբուս	FORDTRANZIT 2.2TD	933LL70	սարքին
13	Ավտոբուս	PAZ 320405-04	936LL70	սարքին
14	Բազմաֆունկցիոնալ մեքենա	KO-806/KAMAZ 43253	859LL70	սարքին
15	Ավտոաշտարակ	MITSUBISHICANTER	038DA61	սարքին
16	Սանիտարական մեքենա	GAZ 32214	840CR61	սարքին
17	մարդատար	GAZ 311000	776LL11	սարքին
18	մարդատար	ԳԱԶ 3102	372AX61	սարքին
19	մեքենա	UAZ236324-101	926LL70	սարքին

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ **Ա. Սարիբեկյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, հեռ. 0242- 2-22-37

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1004-Ա

«27» նոյեմբերի 2024 թվական քաղաք Մարալիկ

ՔԱՂԱՔԱՑԻ ՍԻՄՈՆ ԼՈՒԿԱՇԻ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ Հ. ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 19/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 08-003-0020-0207 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,00552 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի>> 24-րդ կետի 3-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի>> 3.1-րդ և 3.4-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 600-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 3-րդ կետի դրույթներով.

որոշում եմ՝

1. Քաղաքացի Սիմոն Լուկաշի Դարբինյանի կողմից /հետագայում Քաղաքացի/ ինքնակամ կառուցված օրինական ճանաչված և Անի համայնքին սեփականությունը համարված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Հ. Շահինյան փողոց, թիվ 19/7 հասցեում գտնվող 2.34 քառակուսի մետր արտաքին մակերեսով նախամուտքի, 3.55 քառակուսի մետր արտաքին մակերեսով աստիճանահարթակի, 5,04

քառակուսի մետր արտաքին մակերեսով նախամուտքի, 7,70 քառակուսի մետր արտաքին մակերեսով աստիճանավանդակի և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-003-0020-0207 կադաստրային ծածկագրով 0,00552 մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի /Վկայական N 01112024-08-0060/ գործառնական նշանակությունը փոխադրել հասարակական կառուցապատման գործառնական նշանակություն՝ Քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող առևտրի սրահի /Կադաստրային ծածկագիր՝ 08-003-0020-0099, Վկայական 19072019-08-0026, հասցե՝ մարզ Շիրակ Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հ. Շահինյան փողոց 19/1 առևտրի սրահ/ սպասարկման նպատակով:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«27» նոյեմբերի 2024 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, հեռ. 0242-2-22-37

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1005-Ա

«27» նոյեմբերի 2024 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՈՆՅԱ ՄԱՄԻԿՈՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-003-0023-0014/ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» 29-րդ կետի 4-րդ ենթակետի, 50-րդ և 52-րդ կետի, 63-րդ և 64-րդ կետերի դրույթներով և հաշվի առնելով, որ Անի համայնքի Մարալիկ քաղաքի Նոր թաղամաս 3-րդ փողոց, թիվ 10 բնակելի տուն հասցեն վերանվանվել է Նոր թաղամաս 3-րդ փողոց, թիվ 8/1 բնակելի տուն.

որոշում եմ՝

1. Քաղաքացի Սոնյա Մամիկոնի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Մարալիկ քաղաքի Նոր թաղամաս 3-րդ փողոց, թիվ 10 բնակելի տուն (կադաստրային ծածկագիր 08-003-0023-0014) հասցեն վերահասցեավորել՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Անի համայնք, Մարալիկ քաղաք, Նոր թաղամաս 3-րդ փողոց, թիվ 8/1 բնակելի տուն: 2. Ձեղյալ համարել սույն որոշման 1-ին կետում նշված «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Մարալիկ քաղաք Նոր թաղամաս 3-րդ փողոց, թիվ 10 բնակելի տուն»՝ օբյեկտի հին հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«27» նոյեմբերի 2024 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, հեռ. 0242-2-22-37

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1006-Ա

«27» նոյեմբերի 2024 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԱՆՋԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ԳԱԳԻԿ ՍԵՆԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-044-0002-0022/ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» 28-րդ կետի, 29-րդ կետի 3-րդ ենթակետի, 50-րդ և 52-րդ կետերի դրույթներով.

որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկ բնակավայրում /կադաստրային ծածկագիր 08-044-0022-0002/ գտնվող Գագիկ Սենիկի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 0,06678 հեկտար հողամասին և նրանում առկա բնակելի տանը տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Անի համայնք, Լանջիկ բնակավայր, 6-րդ փողոց, թիվ 12/1 բնակելի տուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«27» նոյեմբերի 2024 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, հեռ. 0242-2-22-37

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1007-Ա

«27» նոյեմբերի 2024 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-003-0020-0001/ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» 28-րդ կետի, 29-րդ կետի 3-րդ ենթակետի, 50-րդ և 52-րդ կետերի դրույթներով.

որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում /կադաստրային ծածկագիր 08-003-0020-0001/ գտնվող Անի համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ 0,02203 հեկտար հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Անի համայնք, Մարալիկ քաղաք, Հ. Շահինյան փողոց, թիվ 80/3 հողամաս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«27» նոյեմբերի 2024 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, հեռ. 0242-2-22-37

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1008-Ա

«28» նոյեմբերի 2024 թվական քաղաք Մարալիկ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության,12-րդ կետի 1-ին ենթակետի և 20-րդ կետի 1-ին ենթակետի, ինչպես նաև 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության և 20-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կարիքների համար Անի համայնքապետարանի 2024 թվականի բյուջեից նախատեսվող միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրերով՝ /ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)/՝ 31521440 էլեկտրոնային աճուրդի միջոցով՝ ապրանքների /տոնածառի լույսեր/ ձեռքբերման նպատակով ձևավորել պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով.

Զորիկ Խաչատրյան – Անի համայնքի ղեկավարի տեղակալ – ղեկավար

Գոհար Ծերունյան - կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար-անդամ

Նաթելա Գրիգորյան – կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի 2-րդ կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար - անդամ

Արթուր Սահակյան – Անի համայնքապետարանի էլեկտրիկ - անդամ

2.Վերը նշված ապրանքների ձեռքբերման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Անի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված համայնքային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Սաթենիկ Զաքարյանին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«28» նոյեմբերի 2024 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք,
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1009-Ա

28 նոյեմբերի 2024 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՍԱՐԳԻՍ ԿԱՌԼԵՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-103-0007-0008/ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված <<Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի>> 28-րդ կետի, 29-րդ կետի 3-րդ ենթակետի, 50-րդ կետերի դրույթներով.

որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սարակապ բնակավայրում /կադաստրային ծածկագիր 08-103-0007-0008/ գտնվող՝ Սարգիս Կառլենի Մելքոնյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ 0,165559 հեկտար հողամասին և նրանում առկա շենք-շինություններին տրամադրել հետևյալ հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, Սարակապ բնակավայր, 6-րդ փողոց թիվ 1 բնակելի տուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«28» նոյեմբերի 2024 թվական
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, հեռ. 0242-2-22-37

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1010-Ա

«28» նոյեմբերի 2024 թվական քաղաք Մարալիկ

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության, 8-րդ կետի 3-րդ ենթակետի և 11-րդ կետի 4-րդ ենթակետի դրութներով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կարիքների համար Անի համայնքապետարանի 2024 թվականի բյուջեից նախատեսվող միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրերով՝ /ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)/՝ 18531100, 39298900 գնանշման հարցման միջոցով՝ ապրանքների /նվեր տոպրակներ, զարդարանքի զանազան պարագաներ /փաթիլ, աստղ, զանգակ// ձեռքբերման նպատակով գնումների կազմակերպման համար սահմանել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

   Հարություն Համբարյան - Անի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար (նախագահ)

   Գևորգ Շաբոյան - Անի համայնքի ղեկավարի խորհրդական /անդամ/ Անժելա Սաղաթելյան ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ /անդամ/

   Սաթենիկ Սահակյան - Անի համայնքապետարանի կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված համայնքային ծառայության առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար – /անդամ/

2. ՇՄԱՆՀ-ԳՀԱՊՁԲ-24/1 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Անի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների մեջ

չներառված համայնքային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Սաթենիկ Զաքարյանին: Սահմանել, որ ՇՄԱՆՀ-ԳՀԱՊՁԲ-24/1 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրել 2024 թվականի նոյեմբերի 28-ին, ժամը 11:00-ին, ՀՀ Շիրակի մարզ, Անի համայնքապետարան ք. Մարալիկ, Մադաթյան 1 հասցեում:

3. Գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն և այլ իրավական ակտերին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«28» նոյեմբերի 2024 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, հեռ. 0242-2-22-37

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1011-Ա

«28» նոյեմբերի 2024 թվական քաղաք Մարալիկ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-ին ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության, , 12-րդ կետի 1-ին ենթակետի և 20-րդ կետի 1-ին ենթակետի, ինչպես նաև 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության և 20-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կարիքների համար Անի համայնքապետարանի 2024 թվականի բյուջեից նախատեսվող միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրերով՝ /ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)/՝ 18531100, 39298900 գնանշման հարցման միջոցով՝ ապրանքների /նվեր տոպրակներ, զարդարանքի զանազան պարագաներ /փաթիլ, աստղ, զանգակ// ձեռքբերման նպատակով ձևավորել պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով.

Զորիկ Խաչատրյան – Անի համայնքի ղեկավարի տեղակալ – ղեկավար Վաչագան Հեպոյան - Անի համայնքապետարանի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի պետի ժ/պ – անդամ

Գոհար Ծերունյան - կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար-անդամ

Լիլիթ Հարությունյան – կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի 2-րդ կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար - անդամ

2. Վերը նշված ապրանքների ձեռքբերման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Անի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների մեջ

չներառված համայնքային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Սաթենիկ Զաքարյանին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«28» նոյեմբերի 2024 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, հեռ. 0242-2-22-37

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1012 -Ա
29 նոյեմբերի 2024 թվական

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության, 8-րդ կետի 3-րդ ենթակետի և 11-րդ կետի 4-րդ ենթակետի դրութներով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կարիքների համար Անի համայնքապետարանի 2024 թվականի բյուջեից նախատեսվող միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրերով՝ /ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)/՝ **31521440 էլեկտրոնային աճուրդի միջոցով՝ ապրանքների /տոնածառի լույսեր/** ձեռքբերման նպատակով գնումների կազմակերպման համար սահմանել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հարություն Համբարյան -	Անի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար (նախագահ)
Գևորգ Շաբոյան -	Անի համայնքի ղեկավարի խորհրդական /անդամ/
Սաթենիկ Սահակյան-	Անի համայնքապետարանի կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված համայնքային

ծառայության առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար /անդամ/:

2. ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/22 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Անի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված համայնքային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Սաթենիկ Զաքարյանին:

Սահմանել, որ **ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/22** ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրել 2024 թվականի նոյեմբերի 29-ին, ժամը 17:00-ին, ՀՀ Շիրակի մարզ, Անի համայնքապետարան ք. Մարալիկ, Մադաթյան 1 հասցեում:

3. Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն և այլ իրավական ակտերին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«29» նոյեմբերի 2024 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, հեռ. 0242- 2-22-37

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1013-Ա

«03» դեկտեմբերի 2024 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԱԼԲԵՐՏ ԳԵՂԱՄԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿՈՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 67-Ա որոշումը և հաշվի առնելով, որ ինքնակամ շինություն իրականացրած քաղաքացի՝ Ալբերտ Գեղամի Սիմոնյանի, իր 2024 թվականի հունիսի 05-ի դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Անի համայնքի սեփականությունը համարված 23.96 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0034-0042 կադաստրային ծածկագրով 0.002396 հեկտար մակերեսով հողամասի (Վկայական՝ N 27092024-08-0033, անշարժ գույքի

հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց 15/9 ավտոտնակ) ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը.

որոշում եմ՝

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված՝ 23.96 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով ավտոտնակի շինությունը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0034-0042 կադաստրային ծածկագրով 0.002396 հեկտար մակերեսով հողամասը (Վկայական՝ N 27092024-08-0033, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, Մարալիկ քաղաք, Մադաթյան փողոց 15/9 ավտոտնակ) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով 43 608 (քառասուն երեք հազար վեց հարյուր ութ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել կառուցապատողին, քաղաքացի՝ Ալբերտ Գեղամի Սիմոնյանին /Նույնականացման քարտ՝ 015682115, տրված՝ 29.03.2024, 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, ք. Մարալիկ, Մադաթյան փողոց, 15-րդ շենք, բն. 29) և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված վաճարման ենթակա 43 608 (քառասուն երեք հազար վեց հարյուր ութ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարից 24 631 (քսանչորս հազար վեց հարյուր երեսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը որպես ինքնակամ շինության օրինականացման վճար ենթակա է վճարման Անիի համայնքապետարանի բյուջեի 900495101447 հաշվեհամարին, իսկ մնացած 18 977 (տասնութ հազար ինը հարյուր յոթանասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը որպես հողի արժեք, ենթակա է վճարման Անիի համայնքապետարանի բյուջեի 900495101132 հաշվեհամարին:

3. Սույն որոշման 1-ին կետով ձևավորված վաճառքի ընդհանուր գնին հավելվում են տվյալ գույքային միավորի նկատմամբ, մինչև օտարումը, համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված 26000 /քսանվեց հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ վճարը, որը ենթակա է վճարման Անիի համայնքապետարանի բյուջեի 900495101447 հաշվեհամարին:

4. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ քաղաքացու միջոցներով:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման մասին քաղաքացի Ալբերտ Գեղամի Սիմոնյանին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«03» դեկտեմբերի 2024 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, հեռ. 0242- 2-22-37

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1014-Ա

«03» դեկտեմբերի 2024 թվական ,քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ԳԵՎՈՐԳ ՀՐԱՉՅԱՅԻ ԱՃԵՄՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-100-0201-0031/ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված <<Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի>> 28-րդ կետի, 29-րդ կետի 3-րդ ենթակետի, 50-րդ կետերի դրույթներով և հաշվի առնելով քաղաքացի Գևորգ Հրաչյայի Աճեմյանի կողմից Անի համայնքի ղեկավարին 2024 թվականի հոկտեմբերի 8-ի ներկայացված դիմումը.

որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրում /կադաստրային ծածկագիր 08-100-0201-0031/ գտնվող՝ Գևորգ Հրաչյայի Աճեմյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ 0,312 հեկտար հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, Սառնաղբյուր բնակավայր, 10-րդ փողոց, 3-րդ նրբանցք թիվ 8/3 հողամաս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«03» դեկտեմբերի 2024 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, հեռ. 0242- 2-22-37

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1015-Ա

«03» դեկտեմբերի 2024 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆԻ ՈՒՌՈՒՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-003-0070-0003/ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված <<Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի>> 28-րդ կետի, 29-րդ կետի 3-րդ ենթակետի, 50-րդ կետերի դրույթներով և հաշվի առնելով՝ քաղաքացի Հարություն Վազգենի Ուռուտյանի կողմից 2024 թվականի նոյեմբերի 18-ի դիմումը ուղղված Անի համայնքի ղեկավարին.

որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում /կադաստրային ծածկագիր 08-003-0070-0003/ գտնվող՝ Հարություն Վազգենի Ուռուտյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 0,141112 հեկտար հողամասին և նրանում առկա շենք-շինություններին տրամադրել հետևյալ հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, Մարալիկ քաղաք, Երիտասարդական փողոց թիվ 24/1 բնակելի տուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«03» դեկտեմբերի 2024 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, հեռ. 0242- 2-22-37

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 1016-Ա

03 դեկտեմբերի 2024 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-003-0126-0001-/ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված <<Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի>> 28-րդ կետի, 29-րդ կետի 3-րդ ենթակետի, 50-րդ կետերի դրույթներով.

որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում /կադաստրային ծածկագիր 08-003-0126-0001-/ գտնվող՝ Անի համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ 0,29973 հեկտար հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, Մարալիկ քաղաք թիվ 5 հողամաս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«**03**» դեկտեմբերի 2024 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, հեռ. 0242- 2-22-37

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1017-Ա

03 դեկտեմբերի 2024 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՌՈՄԱՆ ԷԴՎԱՐԴԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿՈՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 67-Ա որոշումը և հաշվի առնելով, որ ինքնակամ շինություն իրականացրած քաղաքացի՝ Ռոման Էդվարդի Պողոսյանի, իր 2024 թվականի հունվարի 18-ի դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Անի համայնքի սեփականությունը համարված 161,57 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի օժանդակ օժանդակ շինությունները /ավտոտնակ՝ 64.66, տնտեսական շինություն, զրուցարան՝ 8.63, պարիսպներ՝ 33.36, 25.78 քառակուսի մետր/ և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0026-0258 կադաստրային ծածկագրով 0.06316 հեկտար մակերեսով հողամասի (Վկայական՝ N 12112024-08-0025, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, Մարալիկ քաղաք, Արկադի Տեր-Թադևոսյան փողոց 19/1 ավտոտնակ) ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը.

որոշում եմ՝

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված՝ 161,57 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի օժանդակ օժանդակ շինությունները /ավտոտնակ՝ 64.66, տնտեսական շինություն, զրուցարան՝ 8.63, պարիսպներ՝ 33.36, 25.78 քառակուսի մետր/ և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0026-0258 կադաստրային ծածկագրով 0.06316 հեկտար մակերեսով հողամասը (Վկայական՝ N 12112024-08-0025, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, Մարալիկ քաղաք, Արկադի Տեր-Թադևոսյան փողոց 19/1 ավտոտնակ) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով 832 416 (ութ հարյուր երեսուներկու հազար չորս հարյուր տասնվեց) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել կառուցապատողին, քաղաքացի՝ Ռոման Էդվարդի Պողոսյանի (Նույնականացման քարտ՝ 010660272, տրված՝ 13.11.2018թ 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Մարալիկ քաղաք, Ձերժինսկի փողոց, 19/2 տուն) և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված վաճարման ենթակա 832 416 (ութ հարյուր երեսուներկու հազար չորս հարյուր տասնվեց) Հայաստանի Հանրապետության դրամ գումարից 332 188 (երեք հարյուր երեսուներկու հազար հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը որպես ինքնակամ շինության օրինականացման վճար ենթակա է վճարման Անիի համայնքապետարանի բյուջեի 900495101447 հաշվեհամարին, իսկ մնացած 500 228 (հինգ հարյուր հազար երկու հարյուր քսանութ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը որպես հողի արժեք, ենթակա է վճարման Անիի համայնքապետարանի բյուջեի 900495101132 հաշվեհամարին:

3. Սույն որոշման 1-ին կետով ձևավորված վաճառքի ընդհանուր գնին հավելվում են տվյալ գույքային միավորի նկատմամբ, մինչև օտարումը, համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված 26000 /քսանվեց հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ վճարը, որը ենթակա է վճարման Անիի համայնքապետարանի բյուջեի 900495101447 հաշվեհամարին:

4. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ քաղաքացու միջոցներով:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման մասին քաղաքացի Ռոման Էդվարդի Պողոսյանին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«03» դեկտեմբերի 2024 թվական
Քաղաք Մարալիկ